ՈՐՈՏԱՆԻ ՄԻ ՁԵՌԱԳՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԷՋԵՐԸ

XIII դարի 90-ական թթ., երբ Գլաձորի համալսարանը արդեն բավականին ճանաչում էր գտել, Սյունիքի տարածքում եղող մնացած գրչատները թե՛ Վայոց ձորում և թե՛ Ծղուկում (Որոտան) նույնպես բավականին աշխուժացել էին։

Այդ ժամանակի Որոտանի մանրանկարչական արվեստին ծանոթանում ենք 1296 թ. Աղիտու վանքում գրիչ Մխիթարի ընդօրինակած Ավետարանի շնորհիվ[1]։ Վանքը կոչվել է Աղուտ գյուղի անունով, որը գտնվում է Որոտան գետի ձախ ափին՝ լեռնալանջի վրա։ Աղուտի հինավուրց եկեղեցուց մնացել են միայն փլատակներ, իսկ գրչատնից պահպանվել է միայն Մաշտոցի անվան Մատենադարանի սույն ձեռագիրը։

Ավետարանը թղթյա է, չափերը՝ 30×23, գրությունը՝ երկսյուն, խոշոր բոլորգիր, թերթերի քանակը՝ 305։ Ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ այն ընդօրինակվել է անբարենպաստ պայմաններում «...ի յաշխարհակալութեան անարէն Խագանին, որ քանդէր սուրբ զեկեղեցիս Աստուծոյ և հալածական առնէր զքահանայսն և զարտացուցանէր զազգն Իսմայելի իւր պիղծ ասախովն ի վերայ քրիստոնէից...»[2]։ Գրիչը տեղեկացնում է, որ մատյանն ավարտի է հասցրել «բազում աշխատութեամբ» և մի քանի անձանց օժանդակությամբ։ Նրան օգնել են հոգևոր ծնողները, փեսա Սարգիսն ու Առաքել քահանան մարմարե քարն են տվել[3], Վանական քահանան՝ «որ զքարտէզն կոկեաց»[4]։ Այս Վանականը միաժամանակ եղել է գրքի սրբագրողը։ Նրա նկատմամբ գրիչը ցուցաբերել է հատուկ վերաբերմունք՝ Պրոխորի պատկերի մոտ հիշատակելով՝ «զՎանական քահանայ, որ աշխատեցաւ ի յղորգեալն, յիշեցէք ի Քրիստոս, ամէն, ով պատուական եղբարք»[5]։ Հիշվում է նաև Խաչիկ քահանայի անունը, որը ոսկի դրամն է տվել թողքը գնելու համար. իսկ Գրիգոր քահանան Ավետարանի գաղափար օրինակն է շնորհել։ Ձեռագիրը կազմել են Մանուել և իր որդի Սարկավագ քահանաները։ Ընդօրինակումը տևել է մեկ տարի։ 1297 թ. այն ստացել է Վարդան քահանան։ 1346 թ. ձեռագիրը վերստին ստացել է Հայրանուշ Միլիվանքեցին[6]։ Վերջինիս մահվանից հետո, 1412 թ. դառնում է նրա որդու՝ Հայրապետի սեփականությունը[7]։ Հետագայում ձեռագիրը պատկանել է Տփղիսի Քարափի Քաղի Ս. Հակոբ եկեղեցուն, իսկ 1937—1940 թթ. ընթացքում բերվել է Մատենադարան[8]։

Գրիչ Մխիթարը բացի բուն հիշատակարանից թողել է նաև փոքր հիշատակագրություններ։ Մարկոս ավետարանչի պատկերի գլխավերևում երկաթագրով գրում է. «Զմեղապարտ գծող Մխիթար յիշեայ Տէր»[9]։ Մարկոսի ավետարանի վերջում, տեքստից անմիջապես հետո, երկաթագրով մակագրված է. «զմեղապարտ Մխիթար յիշեայ ի Քրիստոս, պատուական ընթերցող»[10]։

Նկարչի մասին ձեռագրում ոչ մի տեղեկություն չկա. սակայն որոշ հանգամանքներ թույլ են տալիս ենթադրելու, որ նկարիչը կարող էր լինել նույն գրիչ Մխիթարը։ Սովորա-

---

1 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 7353։

2 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան. Երևան, 1984, էջ 784։

3 Մարմարե քարն օգտագործվել է ներկը հղկելու (լոսելու) նպատակով։

4 Խոսքը վերաբերում է թղթի կոկելուն։

5 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 785։

6 Լ. Խաչիկյանը վերստին ստացման վայրը գրում է «Սիլիվանք»։ Տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 349։

7 Հետագա ստացողների հիշատակագրությունները տեղադրված են մատյանի սկզբում՝ 1բ, 2ա, 2բ էջերում։

8 Օ. Եգանյան. Մատենադարանի ձեռագրական հավաքածուները.— Ցուցակ ձեռագրաց. հ. Ա, Երևան, 1969, էջ 136—139։

9 ՄՄ, ձեռ. № 7353, էջ 98ա։

10 Նույն տեղում, էջ 156բ։

բար նախ գրիչն էր ընդօրինակում ձեռագրի բնագիրը, և ապա նկարիչը հարդարում այն։ Նման դեպքերում գրիչը գաղափար օրինակին հետևելով՝ ազատ էր թողնում նկարվելիք սարածությունը և շարունակում գրությունը։ Իսկ երբ գրիչն ինքն էր նկարազարդողը, պատահում էր, որ նախ նկարում էր և ապա շարունակում գրելիքը։ Մեր ձեռագրում նախ նկարված է Ղուկաս ավետարանչի պատկերը և հետո գրիչը ավետարանչին դիմելով, նրա գլխավերևում գրում է. «Ղուկաս ավետարանիչ ողորմի Մխիթար քահանի ամէն»[11]։ Ավետարանչի լուսապսակը խանգարել է մակագրությանը, «քահանի» բառը մասնատվել է, «ք» տառը միացվել է գրչի անվանը՝ «Մխիթարք», իսկ լուսապսակի ձախ կողմում մնացել է «ահանւ», աջ կողմում՝ «ի, ամ.ն»։ Բացի դրանից, անվանաթերթերի զարդագրերում երբեմն հանդիպում են կապգրեր*, որոնց նմանօրինակները կարելի է տեսնել Մխիթարի մակագրություններում**։

Ձեռագիրն սկսվում է խորաններով։ Գրանք մոնումենտալ, դեկորատիվ ոճավորմամբ երեք սյուների վրա հենված երկկամար խորաններ են, որոնք կատարված են վարպետ գծագրությամբ։ Չնայած խորանների դույները սովորաբար լինում են խորհրդանշական բնույթի, սակայն այստեղ բոլոր խորաններում նկատվում է գույների միօրինակություն։ Օգտագործված են միևնույն կապույտ, կանաչ, դեղին և կարմիր գույները, վերջին խորանում կարմիրն ակտիվանում է։ Խորանների սյուները զարդարված են միատեսակ պարզ տերևազարդով։ Կամարների գլուխներին պատկերված յուրատիպ թռչնազարգերը խորհրդանշական լինելով հանդերձ, իրենց շարժուն կեցվածքներով ու գունագեղությամբ ավելի են կապվում իրական կյանքին։ Հատկապես սիրամարգերն ունեն ինքնատիպ նկարագիր և կրկնվում են տարբեր խորանների գլուխներին։ Նույնը կարելի է ասել աքաղաղների մասին։ 4բ էջում խորանի կամարի տակ, կապույտ խորքի վրա նկարված են վարազն ու եզը՝ մարտի պատրաստ դիրքերով։ 6ա էջի խորանի ձախ կամարի կենտրոնում մարդու դեմք է, որն արևի տպավորություն է թողնում։

Խորանների նմանատիպ ձևավորումները հարազատ էին X—XI դդ. հայկական ձեռագրերին[12], որոնք ավանդաբար փոխանցվել են հետագա դարերին։ Ուշագրավ է, որ Որոտանի սույն ձեռագիրը իր հարդարման այս եղանակով XIII դարի Սյունիքում միակը չէր։ Նմանները ունեցել են իրենց նախագաղափար օրինակները։ Դեռևս X դարում Բղենո Նորավանքում ընդօրինակված նշանավոր «էջմիածնի Ավետարանի» խորանները կառուցված են ճարտարապետական միևնույն եռասյուն-երկկամար ձևերով[13]։ Գունային միևնույն համադրումն ու պարզ հարդարանքն ունեն Որոտանի Ըղուէրծ գյուղում XVI դարում ընդօրինակված Ավետարանի X—XI դդ. մագաղաթյա պահպանակները[14]։ XIII դարում այդ ավանդույթը պահպանվել է նաև Վայոց ձորում՝ Թանատի և Եղեգիսի գրչատներում[15]։

№ 7353 ձեռագրում տասը խորաններից միայն հինգն են, որոնցում զետեղվել են ավետարանների համեմատական ցանկերը (էջ 4ա, 4բ, 5ա, 5բ, 6ա)։ Մնացած հինգ խորանները դատարկ են (6բ, 7ա, 7բ, 8ա, 8բ)։ Կանոնների հերթական դասավորումը խախտված է։ Ա կանոնը տեղավորված է սկզբում՝ էջ 4ա, Բ կանոնը՝ էջ 4բ, 5ա։ 5բ էջն ավարտվում է կանոն Ե-ով, իսկ 6ա էջում՝ Ժ կանոնն է։ 6բ էջի դատարկ խորանի ձախ սյունակում կա հետագա հիշատակագրությունը. «Քրիստոս Աստուած ողորմի Սիս խաթունա, ամէն։ Քրիստոս Աստուած ողորմի Թամթի, ամէն»։

Ձեռագրում բացակայում է Մատթեոս ավետարանչի պատկերը, որի ավետարանի վերջում, գրչի մակագրությունից ներքև, աջ անկյունում Մարկոս ավետարանչի պատկերն է։ Նա նստած է դիմահայաց, ունի կլոր դեմք, հագին՝ կարմիր, կապույտ և կանաչ գույներով աշխարհիկ համազգեստ է, մեջքին դեղին գոտի, ոտքերին՝ երկարաճիտ, ծայրերը կեռված կոշիկներ, մեկը կապույտ, մյուսը՝ կարմիր։ Ուշագրավ է նաև ավետարանչի բազմագույն ու ձևավոր աթոռը։ Մարկոսը մի ձեռքում պահել է եղեգնյա գրիչը, իսկ մյուսով՝ բռնել մկրատը։

Մարկոսի ավետարանի վերջում, գրչի մակագրությունից ներքև, ձախ սյունակում նկարված է Միքայել հրեշտակապետը՝ բազմագույն հագուստով (156բ)։ Նույն էջի աջ անկյունում Ղուկաս ավետարանչի պատկերն է, համարյա միևնույն դիրքով ու հագուստով ինչպիսին Մարկոսն է։ Ղուկաս ավետարանչի

---

[11] ՄՄ, ձեռ. № 7353, էջ 156բ։

* «սկիզբն», «սկզբանէ»—«ս» և «կ» տառերը գրված են միասին։

** «ավ» և «Մխիթար»-ի «Մխ» տառերը գրված են միասին։

[12] Т. Измайлова. Армянская миниатюра, XI в. М., 1979.

[13] ՄՄ, ձեռ. № 2374, թ. 989։

[14] ՄՄ, ձեռ. № 9310, թ. 1579։

[15] Նոր Ջուղա, ձեռ. № 34, ՄՄ, ձեռ. № 7482։

մոտ Միքայել հրեշտակի ներկայությունը հազվադեպ է, ինչպես, օրինակ, ձեռագրերից մեկում Հովհաննես ավետարանչի հետ Գաբրիել հրեշտակի պատկերումը, միայն այն տարբերությամբ, որ վերջինում հորինվածքը ցույց է տալիս ավետարանչի և հրեշտակի գաղափարական կապը[16], մինչդեռ մեր ձեռագրերում նման կապ չի նկատվում։

Հովհաննես ավետարանիչը նկարված է իր անվանաթերթի հետ միևնույն էջում։ Կիսախորանի փոխարեն տեքստի սկզբի աջ անկյունում հյուսվածքային գլխազարդն է, իսկ ձախ սյունակում՝ Հովհաննեսն է ողջ հասակով կանգնած, ձեռքին գավազան։ Հովհաննես ավետարանիչը միևնույն ոճավորումով և

Նկ. 1

գլխին խաչ կրող գավազանով պատկերված է նաև XIII դարի Վենետիկի 1200 թ. Ավետարանում (ձեռ. № 1366/124), որի նկարիչն ու գրության վայրն անհայտ են[17]։ Ավետարանչի լուսապսակի երկու կողմերում կարմիր բոլորգրով գրիչը մակագրել է. «Յոհաննէս աւետարանիչ բերան ոսկի»։ Հովհաննեսի ոտքերի մոտ նստած է Պրոխորը՝ նախորդ ավետարանիչների դիրքով։ Նա ոչ թե բռնել է գրիչը, այլ ձեռքը ուղղակի դրել է գրչի վրա։

Ինչպես տեսնում ենք ավետարանիչների պատկերները իրենց տեղադրմամբ անկանոն են։ Այստեղից պետք է ենթադրել, որ բացակա Մատթեոսի պատկերը նույնպես պետք է լիներ ոչ թե առանձին էջով, այլ, հավանաբար, ավետարանին նախորդող վերջին խորանի հետևակայն ձեռագրի վերջին անավարտ խորանում այն չկա։ Համենայն դեպս ավետարանչի նկարի բացակայությունը պետք է դիտել իբրև ձեռագրի հետագա ավերման հետևանք։

Հարցի լուծումը հնարավոր է դառնում Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Տ. Կույումճյանի 1977 թ. հրատարակած՝ մինչև 1000 թ. հայկական մանրանկարված ձեռագրերի մատենագիտության շնորհիվ[18]։ Գրքում տեղ

Նկ. 2

է գտել նաև Նյու Յորքի Մորգանի գրադարանի № 789 ձեռագրի նկարագրությունը, որը բաղկացած է ընդամենը երեք թերթից և գնվել է 1935 թ. Դեմոտ ընկերությունից։ Դրանք Ավետարանից անջատված մասունքներ են, որոնցից յուրաքանչյուրի երկու էջերը մանրանկարված են։ Ձեռագրի 1ա էջում նկարված խորանն իր բոլոր մանրամասներով նույնն է, ինչ տեսնում ենք Մատենադարանի № 7353 ձեռագրում. այսինքն ճիշտ միևնույն երկկամար խորանն է, կամարների գլխին նույն ինքնատիպ սիրամարգերը, նույնն են խորանի սյուների տերևազարդերը և չկան կանոնների աղյուսակները։ 1բ էջում դարձյալ երկկամար խորանն է՝ իր սիրամարգերով։ Այստեղ, ձախ կամարի տակ, բոլորգրով դրված է. «Զպատուական հայրն մեր զՎարդան, յիշեցէք ի Քրիստոս, ամէն». այսինքն հիշատակված է № 7353 ձեռագրի պատվիրատուի անունը։ Սո-

[16] Ա. Գևորգյան. Հովհաննես ավետարանչի պարականոն մի պատկեր.— «Լրաբեր հասարակական գիտություններիՀ», 1981, № 4, էջ 61։

[17] D. Kouymjian. The Classical tradition in Armenian Art.—REA, t. XV, Paris, 1981, fig. 19, c. 283—284.

[18] D. Kouymjian. Illuminated Armenian manuscripts to the year 1000 C. D. Fresno, California, 1977, fig. 101–102.

ռանի աջ կամարի տակ պատկերված է ողջ հասակով կանգնած Մատթեոսը, որը բացակայում էր Մատենադարանի ձեռագրում։ Նա ձեռքերով կրծքին մոտ է պահել դիրքը։ Իսկ գլխի երկու կողմերում գրված է. «Մաթէոս աւետարանիչ»[19] (նկ. 1,2)։



Նկ. 3

Ավետարանիչներին խորանների տակ կանգնած պատկերելը բնորոշ էր X—XI դդ. մանրանկարչությանը. բացի դրանից, այդ դիմապատկերները երբեմն ունեին որոշակի ինքնատիպ մշակում, որտեղ մարդկանց դեմքերը գծագրելիս նկարիչները նրանց հոնքերն ու քիթը գծագրում էին մեկ ընդհանուր շարունակական գծով։ Այդ նույն ոճով է պատկերված Մաթեոսը, որը շատ մոտ է 966 թ. Բալթիմորի Ավետարանի նկարների ոճին[20]։ Այս հանգամանքը առիթ է հանդիսացել, որ Մորդանի գրադարանի № 789 մատյանի նկարները վերագրվեն X դարին[21]։ Դիմապատկերման նման եղանակը ավանդաբար փոխանցվել է հետագա դարերին և պատահական չէ, որ № 7353-ի ավետարանիչների պատկերներին նման օրինակները նկատվում են Վայոց ձորի XIII դարի մանրանկարիչ Հովհաննեսի աշխատանքներում[22]։

Նկ. 4

Ուշագրավ է, որ № 7353 ձեռագրի Հովհաննես ավետարանչի կերպարը իր հորինվածքով շատ մոտ է № 789-ի Մատթեոսի պատկերին (նկ. 3). կասկած չի մնում, որ դրանք նույն նկարչի աշխատանքներ են և պատկանում են միևնույն ձեռագրին։ № 789-ի 2ա-բ էջերին երկկամար խորաններ են, միևնույն ոճավորված սիրամարգերով։ Երրորդ թերթի ա-բ էջերի խորանների կամարներին պատկերված թռչունները դարձյալ նույնությամբ կրկնված են № 7353-ում։ Համապատասխանում են նույնիսկ նրանց թերթերի մեծությունները (30×23) (նկ. 4,5)։

Եթե ընդունենք, որ իսկապես Մորդանի գրադարանի այդ երեք թերթերը պատկանում են Մատենադարանի № 7353 ձեռագրին, մնում է պարզել՝ արդյո՞ք խորանների քանակը չի ավելանում, քանի որ ձեռագրում արդեն կան տասը խորաններ, որոնք սովորաբար բավարարում են համեմատական աղյուսակների տասը կանոններին, չնայած ձեռագրում միայն հինգ խորաններն են, որ ունեն համեմատական աղյուսակներ։ Բանն այն է, որ ինչպես տեսանք, № 7353-ի միայն Բ կանոնը զբաղեցրել է երկու էջ՝ աղյուսակների ընդար-

---

[19] Ձեռագրին պատկանելիք թերթերի հավաստիությունը պարզելուն մեծապես օգնեցին պրոֆ. Ա. Սանջյանի և պրոֆ. Թ. Մեթյուսի ուղարկած գունապատկերներն ու գունավոր լուսանկարները, որոնց համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում։

[20] S. Der-Nersesian. Armenian manuscripts in the Walters Art gallery. Baltimore, 1973, ms. № 537.

[21] Ա. Սանջյան. Ցուցակ Ամերիկայի հայերեն ձեռագիրներու. Լոս-Անջելես-Լոնդոն, 1976, էջ 607—608։

[22] Ա. Տեր-Ավետիսյան. Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի. հ. Ա, Վիեննա, 1970, ձեռ. № 34։ ՄՄ, ձեռ. № 7482։

ձակ վանդակագծերի պատճառով։ Նույն ձևով կարող էին տեղ զբաղեցնել հաջորդ աղյուսակները։ Ուստի, նկարիչը նախատեսել է նկարել տասից ավելի խորաններ, որոնց շարքում պետք է լիներին նաև № 789-ի խորանները։ Բացի այդ, ձեռագրի սկզբում պետք է որ լիներին Եվսեբիոսի նամակի երկու խորանները։



Նկ. 5

№ 7353 ձեռագիրն ունի մեկ տերունական նկար՝ «Խաչելություն», որը տեղադրված է 98բ լրիվ էջի վրա։ Պատկերի գունային միատոնությունը ստեղծում է այն տպավորությունը, որ դա ոչ թե թղթի վրա կատարված մանրանկար է, այլ՝ մետաղյա խաչի դրվագում (դեղնավուն խաչի վրա Քրիստոսն է, ոտքերի տակ Ադամի գլուխը, իսկ երկու կողմերում, ավելի փոքր խաչերի վրա՝ ավազակները)։

Անվանաթերթում չկան ո՛չ հորինվածքի և ո՛չ էլ զարդարանքի միօրինակություն։ Նրանցից երկուսը ոչ թե կիսախորաններ են, այլ գլխազարդեր. մի բան. որ դարձյալ ավելի կիրառվում էր վաղ շրջանի ձեռագրերում։

Լուսանցազարդերի գերակշռող մասը մոնումենտալ բուսական զարդաձևեր են X—XI դդ. ձեռագրերին համապատասխան։ Դրանց կողքին կան դեկորատիվ զարդեր, որոնցից մի քանիսը հիշեցնում են «կենաց ծառի» տարբերակներ և հարազատ են ժամանակի մանրանկարչությանը։ Նույնը կարելի է ասել զարդս գրերի մասին, որոնք մեծ մասամբ շառաթ և վարդյակների հետ համատեղված հյուսվածքներ ունեն։ Սրանց մոնումենտալ օրինակները կան վաղ շրջանի մատյաններում. սակայն ավելի մեծ աղերս ունեն XIII դարի Թանաստի մանրանկարիչ Հովհաննեսի զարդատառերի հետ։

Ուրեմն, XIII դարի Որոտանի Աղիտու վանքից պահպանված այս միակ ձեռագիրը իր մանրանկարչական արվեստով ավանդաբար կապվելով X—XI դդ. հայկական մանրանկարչության հետ, միաժամանակ ընդգրկում է իր ժամանակի զրքարվեստին հարազատ հատկանիշներ։

Ժամանակի դաժան պայմանների հետևանքով ձեռագիրը կորցրել է իր շատ արժեքավոր նկարազարդ թերթերը, որոնք օտարության մեջ պահպանվել ու դիտվել են իբրև X դարի ձեռագրի մասունքներ։ Տ. Կուլումնյանի հրատարակած մատենագիտության շնորհիվ մեզ հայտնի դարձած «կորած» թերթիկները լրացնում և ամբողջացնում են Մաշտոցի անվան Մատենադարանի № 7353 շատ արժեքավոր ձեռագիր մատյանը։

Ա. Բ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ. Թ. Ա. VIII—VII ԴԱՐԵՐԻ ԳԱՎԱԹ-ՍԱՓՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում մ. թ. ա. VIII—VII դդ. հուշարձանների պեղումներից հայտնաբերված բազմաթիվ կավանոթների շարքում առանձնանում է երկկանթ սափորների մի յուրօրինակ խումբ։ Բիայնական ամբոցներից, բնակավայրերից և դամբարանային համալիրներից գտնված այս փոքրաթիվ գավաթ-սափորները ունեն կարճ կամ ձգված իրան, հարթ հատակ, աղեղնաձև կանթեր։

Պերսեպոլիսում Քսերքսեսին նվիրված բարձրաքանդակներում պատկերված է տեսարան, որտեղ հայերը տուրք են բերում պարսկական արքային։ Նրանք ձեռքներին պահած մի շարք իրերի հետ մեկտեղ տանում են նաև բավականին մեծ չափերի (բարձրությունը՝ մարդկային պատկերների մեկ երրորդի չափով) երկկանթ սափոր։ Այն ունի կլորավուն իրան, ձգված վիզ, աղեղնաձև կանթեր, որոնք վերին մասում ոճավորված են թռչունի գլուխ-

[1] E. F. Schmidt. Persepolis I. Chicago. 1953. plate 29 B.